

# ՆԱԿԱԶ

ՅԵՐԵՎԱՆԻ Ց-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ  
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

---

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1936

30 JAN 2018

87

ՊՐՈԼԵՏԱՐԻՆԵՐ ԲԱԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅԵՒ

# ՆԱԿԱԶ

ՅԵՐԵՎԱՆԻ Ց-ՐԴ ԳՅՈՒՄԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե 1935 թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ

ՔԱՂԻՈՐԾՐԴԻ  
ՅԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
1936

## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցութան կենտրոնական կոմիտեին ղեկավարությամբ Յերեանը դարձավ խորհրդային Հայաստանի սոցիալիստական հանրապետության քաղաքական, կուլտուրական և արդյունաբերական խոշորագույն կենտրոնը։ Մինչպատերազմյան շրջանի 30 հազար բնակչության փոխարեն այժմ Յերեանն ունի 130 հազար բնակիչ։

1931 թ. Յերքաղխորհրդի ընտրություններից հետո ընտրողների թիվը ավելացավ 25 հազար հոգով։ Մեծ թափու ծավալ ստացավ սոցիալիստական արդյունաբերության զարգացումը։ Ցարիզմի ու դաշնակների աիրապետության ժամանակվա Շուստովի մի գործարանի ու մի քանի խըղճուկ տնաբնագործական արհեստանոցների փոխարեն այսոր Յերևանում կա 33 խոշոր պետական արդյունաբերական ձեռնարկություն և 135 փոքր արդյունաբերական ու տնայնագործական ձեռնարկություններ։

1932 թվականին հիմնադրվեց Միության և Անդրկովկասի խոշորագույն հիդրոկայաններից մեկը՝ Քանաքեռի հիդրո-ելեկտրոնկայանը։ 1933 թ. սկսվեց սինթետիկ կառաչուկի վիթխարի կոմբինատի շինարարությունը։ Սկսվեցին Յերեան-Ալմատաֆա լերկաթուղու կառուցման աշխատանքները։ Ավելացավ բանվորների թիվը, փոխվեց քաղաքի բնակչության սոցիալական կազմը։

Յեթե 1934 թ. Յերեանում աշխատում էր 500 բանվոր, ապա ներկայումս Յերեանի ձեռնարկություններում և շինարարության վրա զբաղված են 20.000-ից ավելի բանվոր։



11-281459

Նշանակալից հաջողություններ են ձեռք բերված ՅԵ-  
ՐԵԱՆԻ քաղաքային ու բնակարանային տնաեսաւթյան առ-  
պարեցում:

Աշխատում ե տրամվայը, վորփ գիծը հասցված է 19,9  
կիլոմետրի:

Շահագործման և հանձնված նոր ջրմուզը՝ Գործարկ-  
ման նախորդակին ե գտնվում նոր կոյուղին՝ 12,5 կիլո-  
մետր յերկարությամբ։ Կառուցվեց նոր բաղնիքը, հրուրա-  
նոցը և այլն։

Կիսավեր, խավար, հողաշեն տնակների փոխարեն կո-  
սուցվեցին բազմաթիվ նոր, բազմահարկ, լուսավոր շենքեր՝  
կուլտուրական կենցաղի հարմարություններով։

Զգալի աշխատանք ե կատարվել փողոցների բարե-  
կարգման ասպարեզում, ինչպես և մի շարք ձեռնարկումներ  
են կիրառվել քաղաքի կանաչազարդման բնագավառում։

Մեծ նվաճումներ ունենք ժող. լուսավորության առ-  
պարեցում։ Իրականացվեց պարտադիր ուսումը 7-ամյա  
կրթության ասհմաններում։ Ստեղծվեցին տասնյակ բարձ-  
րագույն ընդհանուր ու տեխնիկական ուսումնական հոս-  
տատություններ ու տեխնիկումներ, կառուցվեցին բազ-  
մաթիվ նոր գպրոցական շենքեր, զգալի չափով ավելացավ  
ուսանողների թիվը։ Մասսայական գպրոցների շինարա-  
րության համար 1931 թ. հատկացված 306.000 ռուբլու  
փոխարեն 1934 թ. ծախսված է 1.050.000 ռուբլի։

Քաղաքը ծածկվեց հիվանդանոցների, բաւժակայաննե-  
րի ցանցով։ Յերևանի բոլղեկիները, բանվորներն ու աշ-  
խատավորներն ալլ նվաճումները ձեռք բերին Համե (բ)կ  
Անդրյերկոմի և Հայաստանի Կ-ի Կենտկոմի զե-  
կավարությամբ անշեղորեն կենսագործելով լենինյան-ստա-  
վինյան ազգային քաղաքականությունն ու Համե (բ) Կ-ի  
Կենտկոմի վորոշումները և մեր մեծ առաջնորդ ընկ. Ստա-  
վինի բոլոր ցուցմունքները։

Սոցիալիզմի կառուցման ներկա ետապը պրոլետա-  
րիատի գիկտատուրայի որդանից՝ քաղխորհրդից պահան-  
ջում ե առավելագույն չափով ուժեղացնել և լավացնել  
իր աշխատանքը, ավելի ամրապնդել կապն ընտրողների  
հետ, պահանջում ե, վոր խորհրդի ամեն մի պատգամա-  
վոր ակտիվ գործունելության ցուցաբերի անշեղորեն  
իրականացնի իր աշխատանքներում Համե (բ) Կ-ի XVII  
համագումարի վորոշումները, միջազգային պրոլետարիատի  
մեծ առաջնորդ ընկեր Ստավինի բոլոր ցուցմունքները  
և վճռաբար պայքար մղի Յերևանի աշխատավորության  
նյութական-կուլտուրական մակարդակը բարձրացնելու  
համար։ Մենք հանձնարարում ենք ձեզ՝ 8-րդ գումարման  
Յերևանի քաղաքային խորհրդի պատգամավորներիդ՝ բոլշե-  
վիկան Անդրյերկոմի և ՀԿ (բ) Կ Կենտկոմի ղեկավա-  
րությամբ անշեղորեն կիրառել կուսակցության վորոշում-  
ները, առանցիկ խորհրդային կառավարության բոլոր  
որենքների, վորոշումների և կարգադրությունների ան-  
խափան կատարումը, արդարացնել խորհրդային Հա-  
յաստանի մայրաքաղաքի խորհրդի պատգամավորների  
բարձր կոչումը և ամենորյա ակտիվ աշխատանքով աջակ-  
ցել մայրաքաղաքի հետագա բարգավաճման ու գարգաց-  
ման աշխատանքներին։

Միայն Լենինի-Ստալինի կուսակցության ղեկավա-  
րությամբ, նրա մեծ ու անհաղթելի դրոշի տակ, միայն  
խորհրդի աշխատանքներում կուսակցության գիծն անշե-  
ղորեն կիրառելու հիման վրա, լենինյան-ստալինյան ազ-  
գային քաղաքականությունը կիրառելու հիման վրա կարող  
ե ապահովել այն խոշորագույն խնդիրների իրագործումը,  
վորոնք դրվում են Յերևանի Քաղխորհրդի առջև՝ մայրաքա-  
ռաքի տանիակ հազարավոր աշխատավորության կողմից։

## I. ՔԱՂԱՔԻ ԿՈՄՊՈՆԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

Ավարտել և շահագործման հանձնել բոլոր կոմունալ  
միավորների ձեռնարկված շինարարությունը:

### 1. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՅԵՎ ԿԱՄՐՁԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Մինչև 1937 թվի վերջը սալահատակել քաղաքի փողոցները 157,000 քառ. մետր տարածությամբ, վորից 50.000 քառ. մետր տարածությունը՝ 1935 թվին (Սունդուկյան, Ենգելսի, Ամիրյան, Ալահվերդյան, Գնումի, Խորհուրդների փողոցները և Լենինի հրապարակը).

բ) Մայթել 40.000 քառ. մետր տարածություն (Աբովյան, Լենինի, Սունդուկյան, Ենգելսի փողոցները), վորից 1935 թ.՝ 15000 քառ. մետր.

գ) Կառուցել 15.000 մետր բետոնե առուներ, վորից 5000 մետրը՝ 1935 թ.

դ) Գետառի վրա կառուցել լերկու կամուրջ.


ե) բաց աններ գետափնյա փողոց, առանձին յելք ստեղծելով Նալբանդյանից՝ Գետառի վրայով՝ դեպի Նորք և Ավանի հանքերը.

զ) Փողոցների և մայթերի ընդհանուր բարեկարգման համար ներդնել 10 միլիոն ռուբլի, վորից 2 միլիոն ռուբլի՝ 1935 թ.

1935 թվի առաջին կիսամյակում կառուցել ասֆալտ-բետոնի և քար ջարդող գործարաններ.

է) Քաղաքը հեղեղումներից պաշտպանելու նպատակով ամբացնել Գետառի ափերը.


Լրացումներ. ա) սալահատակել հացի գործարանի փողոցը, բ) ավարտել քաղաքից դեպի Վաղարշապատ տանող



Օրենքուր հուրանցի շենք

Համարված անձնագիր կրթապետության

9



ճանապարհի նորոգումը. դ) չորացնել կայարանի շրջապատի ճահիճները. դ) 1936 — 1937 թ.թ. կարգի բերել Շահումյան փողոցը և տրամվայի գծից մինչև կարի գործարանը տանող ճանապարհը. ե) կանոնավորել դեպի Սկ տանող խճուղին. զ) կարգավորել քաղաքից Նորք տանող խճուղին. է) չորացնել աերոդրոմի ճահիճները. ը) ոժանդակել նուբաշենից Յերևան տանող ճանապարհը 1935 թվին ավարելուն (հացի, մետաքսի, կարի, կոնսերվի, մեխանիկական և գրեն-գործարաններ, կենտրոնացնել, աերոդրոմ, ՆԳԺԿ և ուղիղները:

## 2. ԲՈՒԻՍՈՎԱՏՈՒՄ ՅԵՎ ԿԱՆԱԶԱԶԱՐԴՈՒՄ

ա) Կանաչաղարդել և բուսապատել քաղաքում 60 հեկտար տարածություն, վորից 10 հեկտարը՝ 1935 թվականին, ներդնելով այդ նպատակի համար հինգ միլիոն ռուբլի վորից 1,5 միլիոնը՝ 1935 թ.: Այդ աշխատանքը կատարեառաջին հերթին գործարանային թաղամասում, տրամվայի շրջապատում, շրջանաձև զբոսավայրում և առաջին դիունի փողոցում.

բ). ավարտել Ղուկաս Ղուկասյանի արձանի քանդակման և նրա անվան հրապարակի ձևավորման աշխատանքները:

Լրացումներ. ա) կարգի բերել կուլտուրայի և հանդըստի պարկը.

զ) ավարտել Ղուկաս Ղուկասյանի և Պուշկինի անվան պուրակների շինարարությունը.

դ) Ն. Աբարկիրում ծառատնկում անցկացնել.

յե) կազմակերպել հատուկ մանկական զբոսավայրեր.

զ) կանաչաղարդել «Արարատ» գործարանը մինչև ընկ. Ստալինի անվան ջրանցքը և բուսաբանական այգին:

(Հայկինո, գեղարվեստի աշխատավորներ, հացի գործարան, բուսապատման և սանիտարական տրեստներ, ձե-

թունառ, տրամվայ, Սկ, Նուբարաշենի և ն. Բյութանիայի բնակչություն և ուրիշները):

### 3. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ԿՈՅՈՒՂԻ ՑԵՎ ՄԱՔՐՈՒՄ

ա) Լայնացնել ջրմուգու հիմական ցանցը, 1937 թ. հասցնելով 49 կիլոմետրի, վորից 15 կիլոմետրը՝ 1935 թ. ընթացքում, ձեռնարկելով այդ աշխատանքները, առաջին հերթին՝ արդյունաբերական, Կոնդ և համալսարանական թաղամասերում, ն. Բյութանիայում և կայարանում.

բ) հակահրդեհալին միջոցներն ուժեղացնելու նպատակով կենտրոնում և արդյունաբերական թաղամասում կառուցել 300 հիգրանտ, վորից 200-ը՝ 1935 թվականին.

գ) քաղաքի արդյունաբերական և կոնդ թաղամասերում ու Ֆինամոյի ստագիոնի մոտ կառուցել մեկական ճնշիչ ռեզերվուար.

դ) ջրմուղի շինարարության կապիտայ ներդրումները մինչև 1937 թ. հասցնել 5 միլիոն ոտքլու, վորից 1935 թվին ներդնել 1,5 միլիոն ոտքլի.

ե) ուժեղացնել կոյուղու շինարարությունն այն հաշվով, վոր գլխավոր կոլեկտորը և փողոցային մագիստրալները քաղաքի ցանցի տնային լրիվ միացումների հետ (Սունդուկյան, Տերյան, Կ. բանակի, Նալբանդյան, Լենինի փոցոցները) շահագործման հանձնվեն 1935 թ. վերջին.

զ) կոյուղու լերկարությունը մինչև 1937 թ. վերջը հասցնել 38 կիլոմետրի, իսկ 1935 թ.՝ 20 կիլոմետրի.

է) կապիտալ ներդրումները կոյուղու գծով մինչև 1937 թվի վերջը հասցնել 5 միլիոն ոտքլու, վորից մեկ և կես միլիոն ոտքլի ներդնել 1935 թվին.

ը) կոյուղու լախացման հետ միաժամանակ ուժեղացնել ազբատար արանսպարտը, ավտոմեքենաների թիվը հասցնել 20-ի և լիովին ավահովել գոյացած աղբի ամենորյա արտահանումը:



Տրամվայի նոր մագիստրուլ շինարարությունը  
և ամալսարանական բազտմանը



Արդարական օրյուն ժամանակի նորությունը շենքը



Քաղաքային այցաւ գիտավեճ ծառության նոր բաւարարությունները մը

ժ) փոշու զեմ պայքարելու նպատակով ձեռք բերել  
10 ելեքտրոհանոց՝ քաղաքի բոլոր փողոցները ջրելու համար.

Ժա) գրնապահների թիվը սանիտարական տրեստի գծով  
հասցնել 120-ի, իսկ տնատիրությունների գծով՝ 300-ի,  
ուժեղացնելով վերջիններիս վրա սանտրեստի հսկողությունը.

ԺԲ) աղբահանական մեքենաների քանակն ավելացնել  
այն հաշվով, վոր ապահովված լինի քաղաքի առենիզացիոն  
լրիվ սպասարկումը.

ԺԳ) քաղաքի զանազան մասերում մինչև 1937 թիվը  
հասարակական արտաքնոցների քանակը հասցնել 10-ի.

ԺԴ) 1935 թվի առաջին կեսին վերջնականապես ավարտել  
նոր բաղնիքի կառուցումը, տեղերի քանակը հասցնելով  
500-ի և ամբողջապես շահագործման հանձնել այն, լրիվ  
չափով ապահովել գոյություն ունեցող չորս բաղնիքի  
աշխատանքը.

ԺԵ) համալսարանական թաղաժառում կառուցել և  
1935 թ. վերջին շահագործման հանձնել մեքենայացված  
լվացքատունը, ներդնելով այդ նպատակի համար 250,000  
ռուբլի.

ԺՊ) 1935 թվի ընթացքում լիովին ավարտել նոր հյուս  
րանոցի շենքը՝ 200 համարներով.

Լրացումներ.—1. Շահագործման հանձնել բաղնիքի և  
հյուսրանոցի 2-րդ կորպուսները.

Ա) բաղնիքներ կառուցել ծայրամասերում (Ն. Մա-  
լաթիա, Արարկիր և այլն).

Բ) քաղաքի ծայրամասերն ապահովել խմելու ջրով.

Գ) Կոնդ թաղաժառի ծորակների թիվն ավելացնել  
10-ի հասցնելով.

Դ) ավելացնել աղբահանման տրանսպորտը.

Ե) ավելացնել առենիզացիոն տակառների թիվը.

Զ) փոշու զեմ պայքարելու համար ձեռք բերել ջրով  
մեքենաներ.



է) քաղաքի զանազան մասերում ավելացնել հասարակական արտաքնոցների թիվը.

ը) արգելել քաղաքի կենտրոնում անտառաններ պահելը.

**4. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ  
ԱՆԽԱՓԱՆ, ԵԼԵՔՏՐՈԵՆԵՐԳԻԱ, ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ  
ԲՆԱԳԱՎԱՐՈՒԻՄ**

ա) Ելեքտրոյանցի աշխատանքը կանոնավորել այն ահանգունով, վոր քաղաքի ծալքամասերին, առանձնապես Մաքսիմ Գորկու անվան թաղամասին, Նոր Բյութանիային, Մալաթիային, Սեբաստիային, Յոնչալլիին և քաղաքին միացված 5 գլուղերին լուսավորություն տրվի.

բ) Քանաքեռի ելեկտրոկայանի ելեկտրոներգիան ընդունելու նպատակով՝ 1935 թ. վերջին յենթակայանների թիվը հասցնել 50-ի.

գ) Կլցանցի աշխատանքներն ընդարձակելու ուղղությամբ մինչև 1937 թ. ներդնել մեկ միլիոն 800 հազար ռուբլի, վորից 1935 թվին՝ 400.000 ռուբլի:

Լրացրումներ.—ա) Քաղաքի հայրամասերը և ուսանողական թաղամասն ապահովել ելեքտրական լույսով:

բ) ուսանողական թաղամասում կառուցել յենթակայան.


գ) Վողոցի լարերը փոխարինել ընդհատակյա լարերով.

դ) ծալքամասերում ռադիո-հեռախոս անցկացնել.

ե) կարգավորել քաղաքի լուսավորության գործը.

զ) քաղաքը ապահովել ել. հաշվիչներով.

(Պոլիտեխնիկ ինստիտուտ, Պետ. համալսարան, քրդական մանկարժական տեխնիկում, Ն. Արարակիր, Մ. Գորկու անվան և Յոնչալլ թաղեր, 5 մերձակա գյուղեր և ռուբիշները)



Հայք գյուղական մաս նվազագույն քայլության վեց ամիսում

## II. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՅԵՎ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ելեքտրոֆարշի գծի յերկարությունը հասցնել 40 կիլոմետրի, վորից 1935 թվին՝ 25 կիլոմետրի. գործող վագոնների թիվը հասցնել 40-ի, իսկ մինչև 1937 թիվը՝ 70-ի:

2. Ելեքտրոֆարշի աշխատանքը բարելավելու և ընդարձակելու համար ներդնել յերեք և կես միլիոն ռուբլի, վորից 1935 թվին՝ մեկ միլիոն ռուբլի:

Լրացումներ.—1. Տրամվայի գիծը 1937 թվին հասցնել մինչև աերոդրոմ, հետագալում՝ Թանաքեռ և Աշտարակ և գործարանային մասը:

2. Կանգերի մոտ (Խրոմպիկ, արդյունաբերական թագամաս) կառուցել տրամվայի սպասավայրեր:

3. Տրամվայի վագոնների կողքին ունենալ ապահովիչներ (ՍԿ, Քանաքեռշին, շոփերների միություն, ծխախոտի գործարան և այլն):

4. Փոստային և հեռագրական առաքումները ժամանակին և անսխալ կատարելու համար անուններ տալ բոլոր փողոցներին, համարակալել տները և ընտակարանները:

5. Բոլոր բակերում ունենալ ապրողների անվանական տախտակ:

6. Համապատասխան շենքեր հատկացնել՝ փոստային բաժանմունքներ բացելու Մաքսիմ Գորկու, կոռպերատիվ, ռուսական և գործարանային թաղամասերում:

7. Համապատասխան տեղեր հատկացնել Հայտեղեկանըին՝ կիոսկեր կառուցելու համար:

8. Ուժեղացնել հսկողությունը կապի տնտեսության վրա, վորպեսզի վչացումներից զերծ մնան հեռախոսային գծերը, սյուները, մեկուսիչները և այլն, մանավանդ ձմրան ամիսներին՝ տանիքները ձլունից մաքրելու ժամանակ:

9. Ֆինանսական աջակցություն ցույց տալ ռադիո-

յանցին՝ քաղաքի ծայրամասերը ուադիոֆիկացման լենթարակելու և բանվորների կուլտուրական սպասարկումն ապահովելու համար։

10. Ռադիոցանցին համապատասխան շենք հատկացնել և այն դուրս բերել ներկա անտանելի վիճակից։

11. Կապի աշխատակիցների զբաղեցրած սենյակներն ազատվելու դեպքում վերջիններիս վորոշ մասը թողնել կապի վարչության տրամադրության տակ, անկտիւնքանից, թե ինչ ֆոնդի յե, նկատի ունենալով այն հանգամանքը, վոր կապի աշխատակիցներից շատերը բնակարանային վատ պայմաններում են գտնվում, վորի հետեւ գանքով հոսունություն և առաջանում։

12. Կապի շենքերում ապրող վոչ կապի աշխատակիցներին վտարել և նրանց բնակարանները հատկացնել կապի աշխատակիցներին։

13. Ռադիոֆիկացման լենթարկել լերկուսից—լերեք դլատվոր փողոցներ, լենինի և Շահումյանի հրապարակները, բոլոր հասարակական ճաշարանները, թելարանները, ուկումբները, դպրոցները, բանվորական և ուսանողական հանրակացարանները։

14. Կապի աշխատողների համար մերձքաղաքային տնտեսություն կազմակերպելու նպատակով մշտական հողամաս հատկացնել։

15. Քաղաքում ավելացնել փոստարկություն թիվը.




Հիմք առևտն բնակչություն ընկերության բնակելի շենք և կորպուս

### III. ԲՆԱԿԱՐԱՆՍՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

1. Մինչև 1937 թ. վերջը քաղաքի բնակելի տարածությունն ավելացնել 150.000 քառ. մետրով, վարից 15.000 քառ. մետր՝ 1935 թ.։

Դամբառի Սահման քովու մեռառի Վարսահ Յելես գեղարվագը Վահագը Վակիրացը



2. Առանձնապես անհրաժեշտ համարել 1935 թ. ընթացքում կառուցելու տրամվայի բանվորների և լնոֆենէր-տեխնիկական անձնակազմի համար մեկ բնակելի շենք՝ 2800 քառ. մետր տարածությամբ:

Ավտոգարաժի բանվորների համար կառուցել մեկ բնակելի շենք՝ 2800 քառ. մետր տարածությամբ։ Ավտոտեղ ուսուցիչների տան կառուցումը՝ 2800 ք. մետր տարածությամբ, ինչպես նաև լրացուցիչ կերպով կառուցել 10 յերկնարկանի փայտլա տուն։

3. Քաղխորհրդի գծով բնակարանային շինարարության համար մինչև 1937 թիվը ներդնել 8.000.000 ռուբլի, վորից 1935 թ.՝ 2 միլիոն ռուբլի։

4. Ամենալուրջ ուշադրություն դարձնել կառուցվող շենքերի վորակի վրա, մանավանդ ինքնարժեքի իջեցման նկատմամբ։

5. Մունիցիպալ շենքերի ոգտագործումը կանոնավորելու նպատակով այդ շենքերը հանձնել բնակարձկոոպներին և ուժեղացնել հսկողությունը շենքերի պահպան ման վրա։

6. Ունեցած բնակարանային ֆոնդի պահպանումը համարելով կարերագույն խնդիր՝ ապահովել բնակարանների սիստեմատիկ նորոգումը և այդ նպատակի համար ներդնել 500 հազար ռուբլի։

Լրացումներ — Նոր Արարկիրում կառուցել 2 բնակելի շենք։

#### IV. ՏԵՂԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Սննդի արդյունաբերության գծով մինչև 1937 թիվ վերջը ներդնել 4 միլիոն 500 հազար ռուբլի 1935 թ. լրիվ շահագործման հանձնել հրուշակալին գործարանների վեհական աշխատավորության համար։

իր բոլոր ցեխերով։ Զեռնամուխ լինել գարեջրի նոր գործարանի կառուցմանը։ Շահագործման հանձնել լիմոնադի գործարանի առաջին հերթը՝ 15 հազար հեկտոլիտր կարողությամբ։

2. Լայնացնել տեղական արդյունաբերության առերական ցանցը՝ 1935 թ. առետրական կետերի թիվը հասցնելով 25-ի։

3. Անհրաժեշտ համարել 1935 թ. ձեռնարկելու աղյուսի և կղմինդրի գործարանի կառուցմանն այն հաշվով, վոր գործարանն ավարտվի 1937 թ., ունենալով 10 միլիոն կղմինդրի և 3 միլիոն աղյուսի արտադրական կարողություն։

4. Ուժեղացնել շինանյութ արտադրող տեղական գործարանների արտադրողականությունը՝ հասցնելով գաջի № 1 գործարանինը 24 հազար տոննի, № 2-ինը՝ 3 հազար տոննի, Յերևանի կրի գործարանինը՝ 5 հազար տոննի, Դավալիի գործարանինը՝ 8 հազար տոննի, աղյուսի գործարանինը՝ մեկ միլիոն հատի, տոմետի գործարանինը՝ 10 հազար քառ. մետրի, և պեմզաբլոկինը՝ 700 հազար հատի, հատուկ ուշադրություն դարձնելով այդ նյութերի վորակի բարձրացման վրա։

Լրացումներ.—1. Հայտաբերել շինանյութերի նոր բազա, բարձրացնել տեղական արդյունաբերության արտադրանքի վորակը (մետաքսի գործարան, տեղարդրաժին, տեղարդրժողկոմատ)։

## V. ԽՈՐՉՐԴԱՅԻՆ ԱՐԵՎՏՐԻ, ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ ՅԵՎ ԲԱՆՍԱՏԱԿԱՐՄՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻՄ

1. Քաղաքի բանվորների և աշխատավորների սպասարկության կարգավորելու նպատակով՝ առետրական կետերի թիվը հասցնել 500-ի։

2. Հասարակական սննդի, ճաշարանների, բուժետների, կաֆեների և ռեստորանների թիվը 1935 թ. ընթացքում հասցնել 130-ի։

3. Կազմակերպել 2 մասնագիտական և մանկական որինակելի ցուցադրական խանութներ՝ Հայտնարկոպի և քաղկոպի ցանցում։

4. 1935 թվի ընթացքում կուլտուրական առևտուրը կարգավորելու նպատակով կառուցել ծածկված կոլտնտշուկա՝ իր բոլոր հարմարություններով։

5. Ուշադրություն դարձնել ինչպես քաղաքի, նույնպես ե գործարանների բոլոր ճաշարտնների ճաշերի վորակի վրա։

Լրացումներ.—1. Բաց անել մանկական խաղալիքների խանութներ։

2. Բաց անել կուլտուրական թեյարան։

3. Ծայրամասերն ապահովել կուլտուրական խանութներով և հացի կետերով։

4. Բարձրացնել ճաշերի վորակը և հսկողություն սահմանել այդ ուղղությամբ։

5. Բաղաքի ծայրամասերում բաց անել չուկաներ և կառուցել նոր ճաշարան։

6. Կոնդ թաղամասում լայնացն' և կոռպերատիվ ցանցը։

7. Բարելավել հացի փոխադրման գործը։

8. Կտրուկ միջոցներ ձեռք առնել՝ իսպառ վերացնելու թերաչափումներն ու թերակղումները և հսկություն սահմանել այդ ուղղությամբ։

9. Մաքսիմ Գորկու անվան գպրոցում ունենալ բուժեր և ճաշարան։

10. 1935 թ. կոնսերվի գործարանին կից հարվածային բանվորների համար բաց անել կաֆե-ճաշարան։

11. Վճռական պայքար մղել գաղտնի կերպով անա-

առանձներ մորթելու դեմ և լսիստ հակողություն սահմանել  
այդ ուղղությամբ:

12. Կազմակերպել թարմ բանջարեղենի վաճառք:

13. Անասնակավաքի կալանի մոտ բաց անել մեկ  
հացի խանութ.

## VI. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Դպրոցական շինարարության համար մինչև 1937  
թ. հատկացնել 4 միլիոն ռուբլի, վորից մեկ միլիոնը՝  
1935 թվին:

2. 1935 թ. կառուցել մեկ լրիվ միջնակարգ դպրոցի  
շենք՝ արդյունաբերական թաղամասում և վոչ լրիվ միջնա-  
կարգ դպրոցի մեկական շենք՝ Արդյունաբերական և Շի-  
լաշի թաղամասերում: Զեռնարկել թուրք կանանց ակում-  
բի կառուցմանն այն հաշվով, վոր 1935 թվականի վերջին  
ակտումբը պատրաստ լինի:

3. Կադրերի պատրաստման համար 1935 թվին ներդնել  
50 հազար ռ.:

4. Դպրոցական շենքերի պահպանման և նորոգման  
համար 1935 թվին ներդնել 250 հազար ռուբլի:

5. Մինչև 1937 թիվը քաղաքի դպրոցներում կազ-  
մակերպել 25 դպրոցական կարինեաներ և լաբորատո-  
րիաներ, վորից 7-ը՝ 1935 թվին:


6. 1935 թվին ապահովել քաղաքի դպրոցների լրիվ  
կահավորումը:

7. Քաղաքի դպրոցներում և ուսանողության հանրա-  
կացարաններում լայնացնել ռագիոցանցը՝ հասցնելով  
կետերի թիվը 20-ի:


8. Դպրոցներում կազմակերպել 4 մանկական կինո:

9. Մանկական թատրոնին հատկացնել հատուկ շենք:

10. 1935 թ. կառուցել և շահագործման հանձնել  
քաղաքային գրադարանի շենքը:




Երևան քաղաքի գործադրության մասին պահանջման մասին



11. Ավարտել կինոլի նոր շենքը և շահագործման  
հանձնել 1935 թ.:
12. Ավելացնել ամառային կինոների թիվը:
13. Կարմիր բանակայինների, բանվորական և ուսա-  
նողական հանրակացարաններում հաճախակի շրջիկ կինո-  
ներ և ներկալացումներ կազմակերպել:
14. 1935 թ. ընթացքում քաղաքում գլխովին վերաց-  
նել բանվորների և շշատավորության մեջ լեղած տար-  
բական անդրագիտությունը:
- Լրացումներ.—1. Կառուցել 4 դպրոցական շենք,  
մեթոդկալան և գրադարան:
2. Բնդարձակել նորքի դպրոցը:
3. Ավարտել կառուչուկինի տասնամյա դպրոցական  
շենքի կառուցումը:
4. Հասարակական մննդի աշխատավորների յերեխա-  
ների համար բաց անել մանկամասուր՝ 30 լերեխայի հա-  
մար, և մեկ կարմիր անկյուն:
5. Համալսարանական թաղամասում բաց անել ման-  
կական հրապարակներ:
6. Կուլտերի համար կառուցել մեկ դպրոց:
7. Անապաստանների համար կառուցել հատուկ տուն:
8. Նորոգել դպրոցական շենքերը:
9. Գյուտարարների համար կառուցել գիշերային  
դպրոց-արհեստանոցներ:
10. Կարի գործարանի բանվորների համար կառուցել  
ուսումնական կոմբինատ:
11. Ապահովել պիոներտան կառուցումը:
12. Մանուկների համար ունենալ հատուկ գեղար-  
վեստական տուն:
13. Կառուցել Սպենդիարյանի անվան յերաժշտական  
դպրոց և ոփթամի ու պլաստիկայի ստուդիայի շենք:
14. 1935 թվին դպրոցներում կազմակերպել տաք-  
նախաճաշ:

15. Ապահովել 7-ամյա պարտադիր շւսում:
16. Բամբակագոտիչ գործարանի թաղամասում կոռուցել 10-ամյա դպրոցի շենք:
17. Ոժանդակել Նոր Սեբաստիայում դպրոցի շենք կառուցելուն և ուժեղացնել մանկապարտեղի աշխատանքները:
18. Կառուցել թուրք կանանց ակումբ:
19. Կաղըերի պատրաստման համար հատկացնել վորոշ գումար:
20. Մանկական թատրոնին հատկացնել հատուկ շենք:
21. 1936 թ. ավարտել կինոյի նոր շենքը, իսկ թաղամասերում ունենալ եժանազին տիպի կինոշենքեր:
22. Հատուկ շենք հատկացնել թուրքական թատրոնին և գործուղումների համար տրամադրել 15.000 ռուբլի:
23. Լուսբաժնին կից կազմակերպել շին. դրասենյակ՝ դպրոցական շինարարության և նորոգումների համար:
24. Արագացնել ուսանողների համար հատուկ տարագ մտցնելը և հնարավորություն տալ կոմունալ ու կուլտուրական սպասարկման համար տոմսեր ձեռք բերել գեղչով:
25. Նորոգել կրկեսի շենքը և մինչև 1937 թ. ավարտել կրկեսի նոր շենքի կառուցումը:
26. Արդյունաբերական թաղամասում կառուցել ֆիզկուլտ ստադիոն և պարագյուտային աշխարակ:
27. Ոժանդակել Դինամոյի ստադիոնի կառուցմանը:
28. Քաղաքում ունենալ լողարան:
29. Ուսանողական թաղամասում կառուցել ֆիզկուլտ հրապարակ և տիր:
30. Շտագեցնել ժողովան կառուցումը:
31. Հ. Պետական թատրոնի համար նախատեսել հատուկ շենքի կառուցում:
32. Ավելացնել ֆոտո-պատիկոնների թիվը:



33. Ռալոնական դատարաններին հատկացնել հաս-  
տուկ շենքեր:

34. Հետևել քաղաքի արտաքին ձևավորմանը և շեն-  
քերի պահպանման ու նորոգման գործին:

35. Ոժանդակել լեռնա-հետախուզական ինստիտու-  
տի շենքի կառուցման գործին:

36. Դասընթացների միջնորդ վերավորակավորել  
տրամվայի, հրշեջ խմբի և շոփերների կազմերը (Զեթ-  
ոճառ, Պետհամալսարան, Անասնաբուժական ինստիտուտ,  
Մսունդ կոմբինատ, Հայկինո, դատական աշխատողներ,  
ֆիզկուլտինուրիուրդ և ուրիշները):

### VII. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

1. Հիվանդանոցներում մահճակալների թիվը 1936 թ.  
հասցնել 365-ի (առբաժնի գծով), իսկ մինչև 1937  
թիվը՝ 450-ի:

2. Բոլոր գործարաններն ապահովել բուժական կե-  
տերով:

3. Տներում բուժողնության գործը կանոնավորելու  
նպատակով ավելացնել բժիշկների թիվը այն հաշվով, վոր  
1936 թ. մեկ բժշկի սպասարկման շրջանի բնակչության  
թիվը 5000-ից ավելի չլինի:

4. Մեծ շինարարություններին կից (Կառւչուկշին,  
Քանաքեռշին և այլն) կազմակերպել ստացիոնարներ՝ 5—10  
մահճակալով:

5. Բոլոր գործարանները և նորակառուցներն ապա-  
հովել մանկապարտեզներով, հասցնելով մսուրների թիվը  
1935 թվին 35-ի (իսկ միշտ 1937 թ.՝ 43-ի), ընդդրկելով  
մինչև 600 լերեխա:

6. Նոր Բյալթանիայում և Յոնջալլում բուժակալան-  
ներ կազմակերպել:

7. Բուժական-սանիտարական օիջոցառումների համար մինչև 1935 թվի վերջը ներդնել 4 միլիոն ռուբլի, վորեց 1935 թվին՝ մեկ միլիոն 200.000 ռուբլի:

8. 1935 թվին վերջնականապես ավարտել և շահագործման հանձնել սուր վարակիչ հիվանդությունների հիվանդանոցի շենքը:

9. Ավարտել և 1935 թվին շահագործման հանձնել  
դեղակայանն իր վողջ սարքավորմամբ:

10. Յեկող տարվա սկզբից ձեռնարկել պոլիկլինիկա-  
լի նոր շենքի կառուցման աշխատանքները:

11. Ուժեղացնել պարզաբն մալարիայի դեմ, առաջին  
հերթին սկսելով քաղաքի և ըրջակայքի ճահիճների չորաց-  
ման աշխատանքները:

12. 1935. թվին կազմակերպել տրոպիկական կաբինետնետներ՝ 2-րդ պոլիկլինիկային կից և նոր Բլութանիալում, իսկ Ն. Զարբախում կազմակերպել հակամալարիական կայան:

Հրացումներ. 1. Բանվորների համար կազմակերպել  
դիէլրային սանատորիա:

Հ. Բավարարել մանկական սահմատորիայի պահանջները  
(ճանապարհ և ջրմուղ):

3: ሂጋዬውን ተስፋዬ እና የሚከተሉት የሚከተሉት የሚከተሉት የሚከተሉት


4. Ավելացնել շտապի ոգնության ավտոների թիվը՝  
այն հասցնելով 4-ի:

5. Թաղաքի ծայրաժամերն ապահովել բուժողնությամբ:

6. Զորացնել ճահիճները և ուժեղացնել պակաբը  
մալարիայի դեմ:

6. Ուստանողական թաղամասում կառուցել ամբուլատորիա.

8. Հսկողություն՝ սահմանել ամբուլատորիալի բժիշկների վրա և նրանց թիվը ավելացնել՝ տներում հաճախումները կանոնավորելու նպատակով:



9. Մաքսիմ Գորկու անվան թաղամասում կառուցել  
ամբուլատորիա:

10. Կարգի բերել հիվանդանոցները և ամբուլատո-  
րիաները:

11. Զանգվի ափին պլյաժ հիմնել (հիվանդանոցների,  
բուժարանների և գեղատների աշխատողներ, ծխախո-  
տի գործարան, բժ. սան. միություն, Պետհամալսա-  
րան, Նոր Արարկիր, Ն. Սեբաստիա և ուրիշները):

### VIII. ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Քաղաքի և արվարձանների գյուղատնեսության և  
անասնապահության աշխատանքներն իրենց բարձրության  
վրա գնելու նպատակով՝ անհրաժեշտ համարել հետեւյալ  
սիջոցառումների կիրառումը:

1. Սկսած 1935 թվից՝ յերեք տարվա ընթացքում  
վերջնականապես ավարտել Յերևան քաղաքի և շրջակա  
կոլտնտեսությունների խաղողի և պտղատու այգիների  
բացուտների լրացման աշխատանքները՝ այդ նպատակով  
կազմակերպելով պտղատու ծառերի և խաղողի տնկարան,  
տնկարանում գարգացնելով արդյունաբերական ընտիր  
տեսակներ (կուլտուրաներ):

2. Կազմակերպել քաղաքի և շրջակա կոլտնտեսու-  
թյունների ցանքով տարածության, խաղողի և պտղատու  
այգիների արտանկարում, այդ գործն ավարտելով 1935 թ.՝

3. Քաղաքին կից 7 կոլտնտեսություններում 1935—  
37 թ. թ. գարգացնել այգեգործությունը և պտղաբուծու-  
թյունը, հասցնելով այգիների տարածությունը 65 հեկ-  
տարի, իսկ արհեստագործական կոլտնտեսություններում  
գարգացնել շերամապահությունը, հասցնելով թթենիների  
տնկարանների տարածությունը 35 հեկտարից 60 հեկտարի:

4. Կոլտնտեսությունները, ինչպես նաև բանջարաբուծական խորհուտեսություններն ու ձեռնարկությունների անտեսություններն անհրաժեշտ որդանական պարագանլութերով ապահովելու նպատակով կազմակերպել աղբանյութերի կենտրոնացման 2 կայան:

5. Հիմնական նորոգման յենթարկել Դալմայի թունելը, ապահովելով Մալաթիայի և Սեբաստիայի կոլտնտեսություններն անհրաժեշտ ջրով, ինչպես նաև նորոգել և լախացնել Շահումյանի, հարավային առվի, Աքուհայաթի մայր Ջրանցքները և քաղաքի ջրաբաշխման ցանցը:

6. Կազմակերպել անասունների բեղմնավորման կայան, ապահովելով այն ազնվացեղ գամբիկներով և ցուլերով:

Անամսաբուժական պրոֆիլակտիկ գործն իր բարձրության վրա գնելու համար 1935 թ. ընթացքում ավարտել անասունների գերեզմանոցի կառուցումը քաղաքում:

7. Սանիտարական սպասարկումը կանոնավորելու նպատակով Վ. Զարբախում կազմակերպել մշտական անասունաբուժակալան՝ մեկ բուժակով և մեկ անասնապահով, իսկ քոչվորների անամսաբուժական սպասարկումը կանոնավորելու համար գարնանը և աշնանը կազմակերպել անասունաբուժական կայաններ Աշտարակի և Աղբաշի ղուերում,

**Լրացումներ.** 1. Զարգացնել թթենիների տնկումը ծայրամասերում և մերձակա գլուղերում (Ն. Սեբաստիա, Ն. Մալաթիա և մերձակա 5 գլուղերը):

2. Գործարաններին կից կազմակերպել մերձքաղաքական տնտեսություններ:

3. Կազմակերպել կաթնամթերքների մասնագիտական տեսչություն:

4. Քաղաքում ավելացնել իջևանների թիվը:

5. Մերձակա խորհուտեսություններում կազմակերպել առկայաններ:

6. Գյուղինստիտուտն ապահովել քաղաքամերձ աշն-

տեսությամբ (մետաքսի գործարան, կարի գործարան, հանրապետական կլինիկա, ինստիտուտ, Ն. Սեբաստիայի բնակչություն, կոժմնաբեր և ուրիշները):

## IX. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

1. Ուժեղացնել պայքարը սոցիալիստական սեփականության և հեղափոխական որինականության պահպանման համար:

2. Յերեանի միլիցիայի աշխատանքներն ամրապնդելու նպատակով:

Սրմատապես բարձրացնել միլիցիայի կազմի կութուրական-քաղաքական պատրաստականության մակարդակը, աշխատանքի վերցնելով քաղաքականապես ստուգված և դասակարգանորեն կոփիած աշխատողների:

3. Պոստապահների մոտ ունենալ փողոցների ցուցակները և հիմնարկների հասցեները:

4. Կազմակերպել հասարակական և պրոֆմիութենական կան կազմակերպությունների ողնությունը միլիցիային ձեռնարկություններում և հիմնարկներում:

5. Բարելավել միլիցիայի աշխատողների կուլտուրական-կենցաղային կարգեների սպասարկումը:

6. Կարգավորել քաղաքի տրանսպորտի աշխատանքը: Ավարիաների գեպքերին վերջ տալու նպատակով՝ խիստ կերպով հետեւել տրանսպորտի աշխատանքի վերաբերյալ կերպով հետեւել տրանսպորտի անթերի կիրագիրդի հրապարակած վորոշումների անթերի կիրառմանը:

7. Դատավարությունն աշխատավորությանը մոտեցնելու նպատակով՝ քաղաքում ավելացնել ժողովատարանների թիվը, հիմնելով քաղաքի 4-րդ ընդանի ժողովատարան:

Լրացումներ.—1. Բարձրացնել միլիցիալի կազմի կուլտուրական-քաղաքական պատրաստականության մակարդակը:

2. Պոստավահների մոտ ունենալ փողոցների և հիմնաբակների հասցեները:

3. Լուսավորել փողոցների ցուցանակները:

4. Ուժեղացնել միլիցիայի պոստերի աշխատանքները:

5. Միլիցիալի աշխատողներին արտոնություններ տալ (կինո, թատրոն, ելքարշ և այլն):

6. Ուժեղացնել պայքարը խուլիգանության դեմ (միլիցիալի կոլեկտիվ, ելքարոքարշ, հաշմկոռպ-միություն, խորհուրդիա):

## X. ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Պրոլետարական շեֆության բնագավառում ավելի ուժեղացնել այն աշխատանքը, զոր կատարում և Յերեանի Քաղխորհուրդը կարմիր բանակի և նավատորմի մասերի նկատմամբ, ոգնություն կազմակերպելով շեֆարկլալ զորամասերին կուլտուրական-կենցաղային սպասարկման բնագավառում և ոժանդակելով նրանց մարտական ու քաղաքական կրթության բարձրացմանը:

2. Ապահովել բանվորագյուղացիական կարմիր բանակի հերթական զորակոչերի նախապատրաստման ու իրականացման օրինակելի կազմակերպումն այնպես, զոր բոլոր զորակոչիկները կարմիր բանակի շարքերը մտնեն վորպես քաղաքականապես սառւզված և ֆիզիկապես ամրակազմ յերիտասարդ բանվորներ ու աշխատավորներ:

3. Շարունակել Յերեանի հակողալին և քիմիական պաշտպանությունն ուժեղացնելու աշխատանքը, ընդու-

լով աշխատավորների լայն մասսաներին հակողալին պաշտպանության միջոցների ուսուցմամբ, ամրապնդելով Պաջրավիաքիմի և կարմիր խաչի աշխատանքները:

4. 1935 թ. ընթացքում կառուցել պաշտպանության տառն՝ իր համապատասխան կահավորումով, մեկ ավետակումբ, որինակելի վարժակայան և հակողալին կայան:

Լրացումներ.—1. Ավորտել հակողային պաշտպանության վարժակայանի կառուցումը:

2. Կառուցել հականեխիչ կայաններ. ավելացնել հըրշեցնել խմբերի թիվը (պաշտամիաքիմ, նֆիկ, շոփերների միություն, հրշեցն աշխատողներ):

Խորհուրդների միջօցով են իրականացվում մեր պետության ամրապնդման և սոցիալիզմի կառուցման բոլոր և ամեն տեսակի միջոցառումները:

Այդ խնդիրների իրականացումն անհնարին կլիներ, յեթե խորհուրդների աշխատանքներում ներգրավված չլինելին աշխատավորների միլիոնավոր մասսաներ (Ստալին):

## X. ԿԱԶՄ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Հիմնովին վերակառուցել Քաղխորհուրդի կազմ-մասսայական աշխատանքները XVII կուսհամագումարի վորշումների տեսանկյունով, բարձրացնելով քաղխորհուրդի և նրա սեկցիաների ու բաժինների մարտականությունը՝ տեսական և քաղաքական կարևորագույն աշխատանքների ու պլանների կատարման համար:

2. Քաղխորհուրդի քաղաքական-հասարակական աշխատանքների շուրջը համախմբել զործարանալին հարվածայիններին, աշխատավոր կանանց, յերիտասարդությանը և խորհրդային ինտելիգենցիալին.

3. Առանձին ուշադրություն դարձնել սեկցիոն և խորհրդային խմբակների աշխատանքների վրա, վերակա-

Առւցել գործող 14 սեկցիաները, հասցնելով նրանց թիվը  
20-ի և ընդգրկել արդյաւնաբերությունը, տրանսպորտը,  
քաղաքի վողջ շինարարությունն ու կոմունալ ձեռնարկու-  
թյունները։ Սերտորեն շաղկապել սեկցիոն աշխատանքը  
բաժինների աշխատանքի հետ։ Սեկցիոն աշխատանքի հիմ-  
նական ձեր համարել սեկցիաներում մշտական կայուն  
բրիգադներ կազմակերպելը և նրանց գործունելության  
շաղկապումը մի քանի որեւէկանների հետ։

4. Լայնացնել քաղխորհրդի խմբակների ցանցը, հաց-  
նելով այն 50-ի, կազմակերպել նոր խմբակներ՝ արդյու-  
նաբերական, կոոպերատիվ, առևտորի, ժողովնողի, ինչպես  
և խոշոր որբեկտներին կից խմբակներ։

5. Ուժեղացնել քաղխորհրդի կենդանի կապը քաղա-  
քին կցված 6 գյուղերի հետ, ուշադրություն դարձնել  
այդ գյուղերի կոլտնտեսությունների տնտեսական-քաղա-  
քական ամրապնդման, գյուղերի բարեկարգման, առողջա-  
պահական և կուլտուրական խնդիրների վրա։

6. Ուժեղացնել աշխատանքն ազգային փոքրամաս-  
նությունների մեջ, ներդրավել նրանց քաղխորհրդի սեկ-  
ցիաներում և թաղալին խորհրդալին խմբակների աշխա-  
տանքներում։ Բարելավել թուրք կանանց ակումբի աշխա-  
տանքը, առանձին ուշադրություն դարձնելով ազգային  
փոքրամասնության կուլտուր-գեղարվեստական սպասարկ-  
ման գործի վրա։

Առաջին հնգամյակի հաղթանակներից հետո մեր կու-  
տակցության և նրա պողպատյա ղեկավար ընկ. Ստալինի  
ղեկավարությամբ խորհրդային լերկիրը թիակում և  
լերկորդ հնգամյակի լերը տարին։

Պրոլետարիատի կուսակցության և նրա հանճարեղ  
առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ մեր մեծ հայ-  
րենիքի հերոսական բանվոր դասակարգը և բազմամիլիոն  
կոլտնտեսականները համարձակ քաղերով գնում են դեպի  
անդասակարգ հասարակություն։

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ  
ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Պատգամավորական խմբակներ կազմակերպվում են  
բոլոր ձեռնարկություններում և հիմնարկություններում։  
Խոշոր ձեռնարկություններում կարող են կազմակերպ-  
վել ցեխային պատգամավորական խմբակներ։

2. Պատգամավորական խմբակները կազմվում են  
ավյալ ձեռնարկության կամ հիմնարկության պատգամա-  
վորներից և այդ խմբակների շուրջը կազմակերպվող՝ այդ  
ձեռնարկության կամ հիմնարկության բանվորներից և  
ծառալողներից։

3. Պատգամավորական խմբակներն իրենց գործնա-  
կան աշխատանքում իրագործում են հետևյալ հիմնական  
խնդիրները։

ա) վերահսկում են ընտրողների նակադի, անդական  
խորհրդի և վերադաս խորհրդային մարմինների կատարմանը։

բ) խմբակի գտնվելու տեղում աջակցում են աղմի-  
նիստրացիալին և հասարակական կազմակերպություննե-  
րին՝ արտադրական խնդիրների կատարման և աշխատա-  
րին՝ կուլտուրական սպասարկման բարեկաման  
գործների կուլտուրական սպասարկման գործում։

գ) աջակցում են կուսակցական և խորհրդային վե-  
րահսկողության հանձնաժողովին՝ նրա աշխատանքի մեջ։  
դ) մասնակցում են քաղաքային և շրջանային խոր-

հուրդների աշխատանքի վերաբերյալ հարցերի մշակմանը և կազմակերպում են պատգամավորների կողմից ընտրողներին տրվող հաշվետվությունը:

4. Պատգամավորական խմբակների աշխատանքը ղեկավարելու համար խմբակի ընդհանուր ժողովում ընտրվում ե նախագահ, վորը հաստատվում ե խորհրդի նախագահության կողմից:

Այս ձեռնարկություններում, ուր կազմակերպվում են ցեխային պատգամավորական խմբակներ, նրանց աշխատանքը ղեկավարելու համար ամբողջ ձեռնարկության խորհրդային ակտիվի ընդհանուր ժողովում ընտրվում ե պատգամավորական խմբակի՝ Յողուց բաղկացած՝ բլուրու:

Բլուրոյի նախագահը հաստատվում ե խորհրդի նախագահության կողմից:

5. Պատգամավորական խմբակն իր աշխատանքների ընթացքում սերտ կապ ե պահպանում տեղական արհեստակցական և մյուս կազմակերպությունների հետ:

6. Պատգամավորական խմբակի առաջադրած բոլոր միջոցառումները կիրառվում են համապատասխան ձեռնարկության կամ հիմնարկության վարչության միջոցով:

7. Պատգամավորական խմբակներին ղեկավարություն ե ցույց տալիս այն քաղաքային կամ ռայոնական խորհուրդը, վորին նրանք անմիջականորեն յենթարկվում են:

8. Խոշոր քաղաքներում կազմակերպվում են յենթարշանակին կամ տեղամասային պատգամավորական խմբակներ, վորոնք միավորում են խորհրդի պատգամավորներին՝ ըստ նրանց ընակության վայրի:

9. Յենթարշանային կամ տեղամասային պատգամավորական խմբակներն իրենց գործնական աշխատանքում իրականացնում են հետևյալ խնդիրները.

ա) վերահսկում և աջակցում են տեղական խորհուրդներին՝ դոլություն ունեցող բնակարանային ֆոնդի դահ-

պանման և ընդլայնման դործում, ինչպես նաև բնակված վայրերի բարեհնությանը և սանիտարական կացության բարելավմանը.

բ) վերահսկում և աջակցում են շրջանի կամ տեղամասի կուլտուրային հիմնարկությունների և ամբողջ առևտուրական ու կոռպերատիվ ցանցի աշխատանքների ամրապնդմանն ու բարելավմանը:

10. Պատգամավորական խմբակի աշխատանքը ղեկավարելու համար խմբակի ընդհանուր ժողովը ընտրում ե նախագահ և Յ—Յ հոգուց բաղկացած բլուրու:

11. Յենթարշանային կամ տեղամասային պատգամավորական խմբակներին ղեկավարություն ե ցույց տալիս քաղաքային կամ շրջանային այն խորհրդի նախագահությունը, վորին նրանք անմիջականորեն յենթարկվում են:

ԽՍՀ Միարյան Կենտրոնական Գործադիր Կամիսեյի  
նախագահ՝ Մ. Կ. Ա. Խ. Խ. Խ.

ԽՍՀ Միարյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի  
Քարտուզար՝ Ա. Յ. Շ. Ն. Ռ. Խ. Խ. Խ.

Մոսկվա, Կրեմլ,  
7 գեկտեմբերի 1934 թ.

30

Սըրապիչ՝ Գար. Հակոբյան  
Քլավիս № Ս—2131,  
պատվեր 340, ակրած 1500  
Հանձնվել և արտադրութ. 19/V 1936 թ.  
Սառագրված և ապագրելու 29/V 1936 թ.

Դյուդիքատի տպարան, Երևան, Նալբանդյան 11



4 JULY 1936

437

11

28145